


4873

ՍԵՆԿԵՐԻ

Լիւսրոսի վերայ

84



Լ. 1892

891.85-3

U-40

Հ. ՍԵՆԿԵՎԻՉ.

ՓԱՐՈՍԻ ՎԵՐԱՅ

(ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԷՆԻՅ.)

12 003

2011

ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԹՈՒԴԱՐԵԱՆԻ.

1892

(49)

891.85-3

U-40

այ.

Հ. ՍԵՆԿԵՎԻՉ.

ՓԱՐՈՍԻ ՎԵՐԱՅ

(ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԷՆԻՅ.)

ՄՈՍԿՈՒՎԱ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐՈՒՄԻՆԻՍՏԻՆԻ

1892

(49)



Дозволено цензурою. С.-Петербургъ, 29 Апрѣля 1892 года.

Тип. М. Бархударянъ, Москва, Мясницкая, д. вая. Ананова.

ՓԱՐՈՍԻ ՎԵՐԱՅ

Է. ՍԵՆԿԵՎԻՉԻ.

Մի անգամ պահապանը, որի պարտա-
կանութիւնն էր վառել Պանամայից
ոչ հեռու գտնուող՝ Ասպինվիլի փա-
րոսի լապտերը, բոլորովին անյայտա-
յաւ: Քանի որ այդ դէպքը պատահել էր փո-
թորի ժամանակ, ենթադրեցին, թէ թշուառը
մօտեցել է ժայռոտ կղզու ծայրին, ուր գտնե-
ւում էր փարոսը և այլքին զոհ դարձել: Այդ
ենթադրութիւնը հաստատուում էր և՛ նրանով,
որ հետեւալ օրը չբացան նրա մակոյկը, որ
սովորաբար կանգնած էր լինում կղզու ժայռոտ
խողովում:

Սյոսպէս ահա փարոսի պահապանի տեղը դատարկ մնաց, նրա փոխարէն պէտք էր շուտով մէկ ուրիշը գտնել, քանի որ լսպտերը քիչ նշանակութիւն չունի՝ թէ տեղային ծովապնա ցութեան և թէ Նիւ-Եօրկից Պանամա երթեկող նաւերի համար:

Մոսկիտեան ծոցը առատ է աւազուտ ծանծաղներով, որոնց միջով անցնող ճանապարհը ցերեկն անդամ շատ վտանգաւոր է. իսկ գիշերը, մանաւանդ մառախուղի ժամանակ, որ յաճախ բարձրանում է այս պրեցեալ գօտու տրեւից տաքացած ջրերի վերայ, այդ ճանապարհը զրեթէ անմատչելի է դառնում:

Փարոսի նոր պահապան ծարելու դժուարութիւնը ընկաւ Պանամայում տպրող՝ Միացեալ Նահանգների հիւպատոսի վերայ: Այդ պնքան էլ հեշտ չէր. նախ՝ որ պէտք էր կատարել 12 ժամուայ ընթացքում. երկրորդ՝ պահապանի պաշտօնի թիկնածուն լինելու էր բարեխիղճ մարդ. ուրիմն անկարելի էր հէնց առաջին պատահողին ընդունել. վերջապէս այդ պաշտօնի թեկնածուների թիւը սահմանափակ շատ սա-

կաւ էր: Փարոսի վերայ կեանքը չափազանց ծանր էր և չէր գրաւում հարաւի ծոյլ ու թափառաշրջիկ վաւակներին: Պահապանը գրեթէ բանտարկեալ է, որովհետեւ բացի կիւրակէ օրերից նա երբէք չէ կարող ոտքը դուրս դնել իւր ժայռոտ կղզուց: Օրէնք մի անգամ Ասպինվիլից գալիս է մակոյկով նրա համար ու տեղեկէն և թարմ ջուր, ապա իսկոյն մակոյկը հեռանում է և կղզու վերայ չէ մնում ոչ մի կենդանի արարած: Պահապանը ապրում է փարոսի վերայ, սարք ու կարքի մէջ է պահում նրան, ցերեկը ծանրաչափի աստիճաններին նայած՝ նա գոյնզգոյն նշաններ է ցոյց տալիս, իսկ երեկոյեան լսպտերն է վառում: Դա մի հեշտ պարապմունք էր, եթէ միայն չը լինէր այն հանգամանքը, որ օրը մի քանի անգամ պահապանը պիտի վեր ու վար անէր աւելի քան 400 ոտ ունեցող՝ թէք և բարձր սանդուխտով՝ աշտարակի նշաններին և լսպտերներին հասնելու. և այդ տեսակ ճանապարհորդութիւն պահապանը պարտաւոր է օրական մի քանի անգամ կատարել:

Լեղհանրապէս ասած՝ պահապանի՝ կեանքը նմանում է վարդապետի, աւելի ճիշտ. ասած ձղնաւորի կեանքի: Այս պատճառով զարմանալու ոչինչ չ'կայ, որ միստեր Իսահակ Փօլկէմբրի՞նը զժուարտութեանց մէջ էր, թէ ռրտեղեց մի յաջորդ ճարէ հանգուցեալ պահապանի փոխարէն և դիւրին է ըմբռնել նրա ուրախութիւնը, երբ այդ յաջորդը հէնց նոյն օրը իր ոտով եկաւ:

Սա 70-ամեայ կամ աւելի տարիքով մի ծերունի էր, բայց առողջ, զեռ չ'կորացած, զինուորականի տեսքով ու շարժումներով: Նրա մազերը բոլորովին սպիտակել էին, երեսի կաշին արեւառ, ինչպէս կրէօլինը¹⁾։ Կապոյտ աչքերին նայած՝ չէր կարելի ասել, որ նա հարուային ցեղին է պատկանում: զրաւիչ, բարի զէմքը հալումաշ ու տխուր էր: Փօլկէմբրի՞նը նա առաջին անգամից իսկ դուր եկաւ. մնում

¹⁾ Այսպէս անուանում են Ամերիկայում նրանց, որոնք ծնւում են եւրոպացւոց և ճնդիկների մէջ տեղի ունեցած ամուսնական կապերից:

էր միայն հարց ու փորձ անել, որի համար նոցա մէջ տեղի ունեցաւ հետեւալ խօսակցութիւնը.

—Ո՞րտեղեց էք դուք:

—Ես լեհացի եմ:

—Մինչև այժմ ի՞նչ գործի էիք:

—Թափառում էի:

—Պահապանը պէտք է նստակեաց կեանք սիրէ:

—Ես հանդատութեան կարօտ եմ:

—Որ և է տեղ ծառայած էք, ունի՞ք ծառայութեան մի վկայական:

Ծերունին հանեց կռան տակից խոնացած մետաքսեայ մի շոր, որ շատ նման էր հին դրօշակի կտորի, բաց արաւ և ասաց.

—Ահա իմ վկայականներս. այս խաչը ստացել եմ երեսուն թուականին. ահա միւսը—սպանական, որ ստացել եմ կարլիսանների կռուի մէջ. երբորդը Ֆրանսիական է՝ պատուաւոր լէգիօնի, չորրորդը ստացել եմ Ունգարիայում. մասնակցել եմ նաև Միացեալ Նահանգներում հարաւայինների դէմ մղած պատերազմին, բայց այդ տեղ խաչ չեն տալիս—այ՛ վկայագիրը:

Փօլկէմբրիջը վերցրեց թերթը և սկսեց կարդալ.
— Հմ... Սկավինսկիյ, այդ է ձեր ազգանունը.
սուխներով կռուելիս երկու դրօշակ էք
խլել... դուք քաջ զինուոր եիք:

— Ես կարող եմ և բարեխիղճ պահապան
լինել:

— Դուք հարկադրուած կը լինիք օրէնք մի
քանի անգամ աշտարակի գլուխը բարձրանալ.
առօղջ են արգելօք ձեր ոտները:

— Ոտով ես անցել եմ «պլէննէրը» (այս-
պէս են կոչուում Նիւ-Եօրկի և Կալիֆօրնիայի
մէջ դանուած անսահման անապատները:

— Ծովային ծառայութեան մասին զաղափար
ունէ՞ք:

— Երեք տարի ծառայել եմ կէտ-ձուկ որ-
սացող նաւում:

— Ուրեմն դուք զանազան արհեստներ փոր-
ձե՞լ էք:

— Միմիայն հանգիստ կեանք չեմ փորձել:

— Ինչո՞ւ...

Ծերունին ուսերը թափ տուեց, ճակատապիտ, երևի, այդպէս է...

— Ինձ այնպէս է թւում, որ դուք պահա-
պանի պաշտօնի համար շատ ծեր էք...

— Պարոն—դողդոջուն ձայնով խօսեց յան-
կարծ թիկնածուն, մաշուած և ջարդուած եմ
ես սաստիկ. այս այնպիսի մի տեղ է, որ ես
ամենից աւելի կը ջանկայի ունենալ. անհրա-
ժեշտ է, որ ինձ ու ինձ ասեմ, այստեղ կըմնաս,
այս է քո նաւահանգիստը. Ե՛հ, պարոն, ձեզա-
նից միայն կախուած է այդ. այլ ևս անկարող
եմ այդպիսի տեղ ծարել. որչափ բազդաւոր
եմ, որ այս միջոցին Պանամայ դանուեցայ: Ա-
ղաչում եմ ձեզ... վկայ է Աստուած, որ ես
նմանում եմ մի նաւի, որ կը խորտակուի ան-
շուշտ, եթէ նաւահանգիստ չըմանի... եթէ կա-
մենում էք մի լաւութիւն անել ծերուելիս...
երդուում եմ Աստուծոյ անուանով, որ ես ազնիւ
մարդ եմ, բայց... բաւ է, որքան թափառեցի:

Ծերունու կապոյտ աչքերը արայայայտում
էին մի այնպիսի ջերմ պաղատանք, որ բարի և
պարզ սիրտ ունեցող Փօլկէմբրիջը զգացուեցաւ:

— Լաւ, ասաց նա, բնդունում եմ ձեզ. դուք
պահապան էք:

Ծերունու գէմքը փայլեց անասելի ուրախութեամբ:

— Շնորհակալ եմ ձեզանից:

— Կարճ էք այսօր փարոս գնալ:

— Այո:

— Դէ՛հ, Աստուած ձեզ հետ. բայց մի խօսք ևս. եթէ ծառայութեան մէջ անձիշտ գտնուէք, դուք հրաժարուած կը լինէք:

— Շատ լաւ:

Հէնց նոյն երեկոյ, երբ արեգակը անցաւ Պանամայի պարանոցի միւս կողմը ու շոգ օրին փոխարինեց պարզեկայ գիշերը, մեր նոր պահապանը իր պաշտօնին էր արդէն, որովհետեւ լսաւ տերը, ինչպէս միշտ, ասրածում էր ջրի երեսին իր լոյսի պայծառ փնջերը:

Հանգիստ, խաղաղ գիշեր էր. կատարեալ արեւադարձ-երկրի գիշեր, ներշնչուած թափանցող խաւարով, որը լուսնի չորս կողմը կազմում էր մի աննկատելի, նուրբ եղբներով, մեծ շրջան ծխածանի միախառնումներով ներկուած: Մակընթացութեան պատճառով ծովը փոքր ինչ ալեկոծուում էր. ահագին կրակների առաջ,

պատշգամբի վերայ, կանգնած էր Սկավինսկին: Եթէ նրա վերայ նայելիս լինէինք ներքեից, նա կերէր, իբրեւ մի հազիւ նշմարելի կէտ:

Նա ճիգ էր թափում կարգի բերել իր մրտաճմուէքները և ինքն իրան հաշիւ առլ իր նոր վիճակի մասին, բայց նրա միտքը տպաւորութիւնների ազդեցութեան տակ ընկնելով, չէր կարողանում կանոնաւորապէս զարգանալ: Իր մէջ նա զգում էր այն, ինչ որ կը զգայ հալածուած դադանը, երբ նրան յաջողութիւն հալածողներից պատսպարուել մի որ և է անմաւաճելի քարափի կամ այրի մէջ:

Ծերունու համար ևս հասաւ հանգստութեան ժամը... Ապահովութեան գիտակցութիւնը լցնում էր նրա սիրտը մի անբացատրելի քաղցրութեամբ. ժայռի վերայ կանգնած՝ նա պատրաստ էր ծաղրել իր նախկին թափառաշրջիկ կեանքը, վաղեմի անբաղդութիւնները, անյաջողութիւնները և յիրաւի, նա նմանում էր այն նաւին, որի կայմերը փոթորիկը փռել էր, կարասել թռկերն ու տռագաստները, ալիքների բարձրութիւնից շարժել նրան մինչև ծո-

վի անգունդը. նաւին, որին այդ փոթորիկը խփում էր անդադար ալիքներով, թքում նրա վերայ իր փրփուրով... բայց, որը այնու ամենայնիւ, հասաւ նաւահանգիստ... Սկավինսկու գլխի մէջ մինը միւսի ետեւից երեան էին գալիս այս փոթորկի պատկերները, ինչպէս հակառակ այն հանգիստ ապագայի, որը այժմ պէտք է սկսուէր...

Իր տարօրինակ արկածների մի մասը նա պատմել էր Փօլկէմբրիջուն, բայց թողնելով շատ շատերը. անբաղդութիւնը միշտ հետևում էր նրան:

Քանի քանի անգամ նա վրան պատրաստեց իր համար և ճրագ վառեց, որպէս զի նստակեաց կեանք վարէ. բայց ամեն անգամ քամին տանում էր նրա վրանի ցցերը, հանդցնում ճրագը, իսկ նրան կորուստեան էր մատնում: Աշտարակի պատշգամբից նայելով նա մտաբերում էր իր անցնալը. կռիւս էր տալիս նա աշխարհի չորս կողմերում և աքսորանքի մէջ փորձեց ամեն տեսակ պարապմունքներ:

Աշխատասիրութեամբ և ակնուրթեամբ նա

շատ անգամ կարողացաւ փող զիզել, բայց միշտ կորցնում էր, չ'նայած, որ չափազանց հեռաւոր էր: Աւստրալիայում բանում էր ոսկու հանքերում, ապամանդի էր ման գալիս Աֆրիկայում, Սրենիւան հնդկաստանում հրմուտ նետաձիգ զինուոր էր:

Կալիֆօրնիայում էլ նա ազարակի տէր դարձաւ, բայց երաշար քար ու քանդ արաւ. փորձ փորձեց առևտրական յարաբերութեանց մէջ մտնել Բրազիլիայի խորքերում ապրող վայրենի ցեղերի հետ—նրա նաւը Ամազոնկա գետի վերայ փշրուեց, իսկ ինքը անպաշտպան, զրեթէ մերկ, ստիպուած եղաւ շարաթներով թափառել անտառներում, կերակրվում էր վայրի բանջարեղէններով, բոպէ առ բոպէ վախենալով, թէ կատաղի գազանները նրան կարող են կրտոր-կտոր անել: Ապա չեղինէ կղզու վերայ, Արկանզասում, զորքնանոց հիմնեց. այս էլ հրդեհը լափեց:

Սրանից յետոյ հնդիկների ձեռքն ընկաւ ժայռոտ լեռներում և զրեթէ հրաշքով, կարելի է ասել նրան ազատեցին Կանադայի հրաշանա-

ձիւները: Բօրիօ և Բայի քաղաքների մէջ երթեկող նաւի վերայ նաւաստի էր, մի ուրիշ նաւի վերայ կէտ ձուկ էր որսում, բայց այդ նաւերը երկուսն էլ խորտակուեցին:

Սկզբի գործարան ունէր Հավաննայում, սակայն Հիւանդ ժամանակ ընկերը գողացաւ նրա ունեցած չ'ունեցածը: Վերջ ի վերջոյ Սապին-վիլ ընկաւ և այստեղ թերևս, վերջ լինի նրա ձախարհութիւններին: Սրբեօք ինչ դժբախտութիւն նորից կը վերահասնի նրան այդ քարքարուա կղզու վերայ, ուր մուտք չեն գործում ոչ ջուրը, ոչ կրակը, ոչ էլ մարդիկ: Ի միջի այլոց այս էլ պէտք է ասել, որ Սկավինսկին մարդկանցից շատ վատութիւն չէր տեսել. ընդհակառակը՝ աւելի յաճախ հանդիպել է բարի մարդկանց, բայց զրա փոխարէն բնութեան չորս տարերքը կարծես նրան հալածում էին: Ընդհանրողները ասում էին, որ նա անբաղդ, սեռ ծանաջողները ասում էին, որ նա անբաղդ, սեռ ծանախողները է աշխարհ եկել և զրանով ահա բացատրում էին ամեն ինչ: Ինքն Սկավինսկին էլ վերջապէս սկսեց մոլեռանդութեամբ հաւատալ ծանախողին: Նա հաւատում էր,

օրինակ, որ մի զօրեղ, վայրապ ձեռք հալածում է նրան ամենուրեք՝ թէ՛ յամաքի և թէ՛ ծովի վերայ: Բայց զրա մասին չէր սիրում խօսել. երբեմնապէս միայն, երբ նրան հարցնում էին, ում ձեռքն է այդ, նա խորհրդաւոր կերպով ցոյց էր տալիս բեւեռային տառը և ասում, թէ նա գալիս է այնտեղից...

Ուղիղն ասած նրան շրջապատող անյաջողութիւններն իրանց յարստանութեամբ տարօրինակ էին դարձել և բնականաբար այդ բոլորը Սկավինսկուն պիտի երևէր մի խորհրդաւոր հանելուկ:

Տնդիկի համբերութիւն ունէր նա. համբերութիւն, որը յառաջանում էր սրտի մաքրութիւնից: Մի ժամանակ Վէնդրիայում սուրբի մի քանի հարուածներ ստացաւ նա և այդ նրա համար, որ չ'ուզեց բռնել ցոյց տուած ատպանդակից, իբրև ազատուելու միակ միջոց, չ'կամեցաւ ասել «pardon» (ներողութիւն)¹⁾:

1) Ակնարկ, որ Սկավինսկին մերժեց ներողութիւն խնդրել:

Նոյնպէս և զժբախտութիւնը չէր ընկճում նրան. աշխատասէր մըջիւնի նման սարն էր բարձրանում հարիւր անգամ ցած է գլորուել, բայց վերստին սկսել հանդարտ կերպով բարձրանալ հարիւր և մէկերորդ անգամը. նա մի ուրիշ տեսակի տարօրինակ մարդ էր:

Այս ծերունի զինուորը, որին միշտ վիճակուած է եղել չարքաշութիւնների մէջ ապրել, զժբախտութեամբ ամրապնդուել — մանկական սիրտ ունէր:

Կուբա կղզու վերայ տարածուած վարակիչ հիւանդութեան ժամանակ նա տկարացաւ այն պատճառով, որ քինաքինան, որից բուսականաչափ ունէր, ամբողջովին աղքատներին բաժանեց՝ չ'թողնելով իր համար և ոչ մի զրան:

Զարմանալի է, որ այդքան անյաջողութիւններից յետոյ նա հաստատ համոզուած էր և լիայոյս, որ ամեն ինչ կարող է դեռ ևս լաւանալ: Զմեռը նա սովորաբար կենդանանում և նախադուշակում էր զանազան նշանաւոր անցքեր, որոնց անհամբեր սպասելով շատ տարիներ ապրում էր յուսով:

Սակայն մի ձմեռ փոխարինում էր միւսին և Սկավինսկին ոչինչ բանի չ'հասաւ, բացի այն, որ նրա գլուխը զարդարուեցաւ ձիւնի նման սպիտակ ալիքներով, վերջապէս նա ծերացաւ, եռանդը սկսեց թուլանալ, համբերութիւնը տեղի տուեց լուռ հնազանդութեան: Առաջուայ հանդարտութեան տեղը բռնեց փափուկ դիւրազգացութիւնը և փորձառու զինուորը մի լացկանի վերափոխուեց, որը ամեն մի զատարկ բանի համար պատրաստ էր արտասուք թափել: Դրանից զատ՝ ժամանակ առ ժամանակ ամենահասարակ շարժառիթն անգամ զարթեցնում էր նրա մէջ հայրենիքի կարօտը, որով սաստիկ տանջւում էր՝ ծիծեռնակների, մոխրագոյն, ծնծղկանման թռչունների երեւոյթ, սարերի ձիւնը, ականջներին հասնող մեղեդին, որը յիշեցնում էր նրան իր կրթեմն լսածը... Ի վերջոյ նրան կաշկանդեց մի միտք, — հանրգտութեան մտածմունքը տիրապիտեց ծերունու ամբողջ գոյութիւնը, կրանեց նրա բոլոր ցանկութիւնները, բոլոր յոյսերը...

Մշտնջենաւոր թափառականին ամենից թանկ

5930



և ամենից ցանկալի էր մի ու է խաղաղ անկիւն, ուր նա կարող լինէր հանգիստ առնել ու հանգարտ սպասել իր վերջին օրին:

Կարելի է հէնց նրա համար, որ բազմի անբացատրելի կամայականութիւնները մղում էին նրան դէպի ծով ու ցամաք, ազատ շնչել անգամ չ'թողնելով—Սկավինսկին երեակայում էր, որ մարդուս ամենաբարձր բազդաւորութիւնը կայանում է չ'թափառելու մէջ:

Ճշմարիտն ասած նա արժանի էր այդ համեստ վիճակին, բայց թշուառականը այնքան սովոր էր անյաջողութիւններին, որ այդ չնչին բողբոջ իր համար մի անհասանելի բան էր կարծում: Նա չէր կարող յուսալ:

Այն ինչ հիմա, բոլորովին անսպասելի կերպով և այն 12 ժամուայ մէջ՝ աշխարհի մէջ տուայաւ մի տեղ, որը կարծես նրա համար էր ստեղծուած: Սկավինսկին շատ անգամ ինքն իրան հարցնում էր, մի՞թէ իրողութիւն է այս, և չէր համարձակվում պատասխանել, այն. մինչդեռ իրականութիւնն հաստատում էր այդ անհերքելի փաստերով:

Սահում անցնում էին ժամերը, բայց նա դեռ կանգնած էր պատշգամբի վերայ, անյաղ կերպով նայում էր, համոզւում էր: Կարող էր թւալ, որ նա իր կեանքի մէջ առաջին անգամն է տեսնում ծով, որովհետեւ Սոպինսկիին ժամացոյցով կէս գիշեր էր արդէն և նա զեռ չէր հեռացել մինչև ամպերն հասնող բարձրութիւնից, դիտում էր...

Ներքեւում, նրա ոտներին տակ, ծփում էր ծովը, լապտերը մթութեան մէջ տարածւում էր իր կոնաձև հսկայական լոյսը, որից այն կողմը ծերունու հայեացքը կորչում էր միանգամայն մթին, խորհրդաւոր և զարհուրելի հեռասանի մէջ. այդ միգապատ տարածութիւնը կարծես ինքնին վազում էր դէպի լոյսը: Մեծ մեծ ալիքները ցոյց էին տալիս մթութեան իրանց գլուխները և մռնչալով վազում փոքրիկ կղզու ստորոտը. այդ միջոցին տեսնւում էին նրանց փրփրադէղ կատարները, որոնք ցոլում էին լապտերի լոյսի առաջ փարպազոյն փայլով: Ծովի մակընթացութիւնը քանի զնում սաստկանում էր և լցնում աւազուտ ծանծաղուտ:

ները, ուժգին և ահռելի կերպով լսելի էր լինում ովկիանոսի խորհրդաւոր ձայնը, որը նրմանում էր մերթ զէնքերի շառաչիւնի, մերթ ահադին անտառների աղաղակին, մերթ հեռում հնչող մարդկային ձայների խուլ արձագանքին... առ ժամանակ ամեն տեղ լռութիւն էր տիրում. սրանից յետոյ ծերունու ականջներին հասնում էին մի քանի խոր հառաչանքներ, ապա մի տեսակ լաց, ու կրկին ուժգին սպառնալիքներ. . .

Քամին 'ի վերջոյ ցրեց մառախուղը, բայց կռտակեց լուսինը ծածկող ջիր-շան, սե-սե ամպերը, հարաւային քամին քանի գնում սաստկանում էր. ալիքները կատաղաբար ցաւկում էին փարոսի ժայռի վերայ և աշտարակի ստորոտը լցնում իրանց փրփուրով: Հեռուից լսելի էր լինում փոթորկի հեռաւոր զոչիւնը. ովկիանոսի մութ, ալէկոծ տարածութեան մէջ փայլփլեցին մի քանի, նաւերի կայմերից կախած՝ լապտերներ. այս կանաչ կէտերը կամ վեր էին բարձրանում, կամ իջնում, ցածանում էին, կամ էլ աջ-ձախ տարուբերւում:

Սկավինսկին իջաւ իր սենեակը, քամին մռնչում էր, այնտեղ, այդ նաւերի վերայ, մարդիկ մաքառում էին զիշերուայ խաւարի, ալիքների գէմ, այն ինչ սենեակում խաղաղ ու հանդիստ էր. թոյլ կերպով լսելի էր լինում փոթորկի արձագանքը. ժամացոյցի չափաւոր «չնրկ-չախկը» միայն օրօր էր ասում վաստակաւոր ծերունուն:

II.

Ժամեր, օրեր, ամիսներ անցան... նաւաստիները պնդում են, որ երբեմն՝ ծովի կատաղի ժամանակ, մութ զիշերը, կարծես թէ մի խորհրդաւոր ձայն անուն-անուն նրանց կանչում է, եթէ անսահման ծովը կարող է այդպէս կանչել, ուրեմն կարելի է կարծել թէ մարդու ծերութեան ժամանակ նրան կանչում է մի այլ անսահմանութիւն, աւելի մութ, աւելի խորհրդաւոր, և որքան կիանքը շատ է մաշել նրան, այնքան այդ ձայնը քաղցր է թւում, բայց նրան լսելու համար պէտք է հանդստութիւն:

Ծեր հասակը սիրում է առանձնանալ, կարծես նա զգում է իր ոտքը գերեզմանի վերայ:

Սկավինսկու համար փարոսը այդպիսի մի կէս-գերեզմանն էր: Դժուար է երեւկայել աւելի միակերպ կեանք, քան աշտարակի վերայ. թէ բաղդը ձգում էլ է այդտեղ երիտասարդներին, նրանք շատ շուտ թողնում են:

Այսպէս՝ փարոսի պահապանը լինում է, սովորաբար, հասակն առած, մռայլ և իր մէջ ընկղմած մարդ: Եթէ դէպքով նա թողնի իր փարոսը և ընկնի մարդկանց շրջան, նա ման է դալիս այդտեղ, իբրև խորունկ քնից զարթնած: Աշտարակի վերայ տեղի չեն ունենում մանր տպաւորութիւններ, որոնք առօրեայ կեանքի մէջ սովորեցնում են մարդուն ամեն ինչ իր վերայ առնել. այն, ինչի հետ շփուում է պահապանը, փառաւոր է, վերձ նեղ, որոշ ձևերից: Երկինքը մի անսահման տարածութիւն, ծովը միւսը և այդ երկու անվերջ տարածութիւնների մէջ մի մարդկային հոգի: Մտածմունքներով, աւելի լաւ ասած՝ մտախոհութիւններով է այդ կեանքը, որից պահապանին ոչ մի

բան չէ կարող բաժանել, անգամ նրա պարսպմունքը:

Օր աւուր յետեից տէր-ողորմեայի հատերի նման անցնում է, եղանակի փոփոխութիւնները լոկ կազմում են միակ զանազանակերպութիւնը: Այնու ամենայնիւ պահապանը չէ զգացել իրան երբէք այնքան բաղդաւոր, որքան այժմ:

Արթնանում է նա արշալուսից առաջ, կերակուր ուտում, լապտերի ապակիները սրբում և ապա պատշգամբի վերայ նստած՝ հեռու հեռու դիտում է ծովը. երբէք, երբէք նրա աչքերը չէին յաղկնում իր առաջը սփռուած տեսարաններից: Սովորաբար երեւում էին ահագին փէրուղեայ ֆօնի տարածութեան վերայ փքուած առաքասանների շարքը, որոնք այնչափ լուսաւորուած էին արեգակի ճառագայթներով, որ լոյսի առատութիւնից մարդուս աչքերը խտուտ էին դալիս. երբեմն նաւահները, օգտուելով պասսատեան քամիներից՝ շարժւում էին իրար յետեից, ինչպէս որորների կամ ձկնկուլների շղթան. ճանապարհ յոյց տաւող կարմիր տակառները ալիքների վերայ օրօրում էին թեթև

Ճօճումներով: Միշտ կէսօրին առաջաստների միջից, ահագին սիւնի նման, քուլա-քուլա բարձրանում էր ծուխը. դա շողենաւ էր, որ նիւ-եօրկից Ասպինվիլ բերում էր ճանապարհորդներ և ապրանք, թողնելով իր յեանից փրփուրի երկար շերտեր... Պատշգամբի միւս կողմից Սկավինսկին Ասպինվիլն էր տեսնում, նրա շարժուն և ազմկալի նաւահանգիստը, իսկ ծովածոցում կայմերի մի անտառ, մակոյկներ և նաւակներ. մի քիչ հեռուն—սպիտակ տներ և քաղաքի փոքրիկ աշտարակները. . .

Փարոսի բարձրութիւնից տները որոնների բոյների էին նմանում, մակոյկները՝ բզեզների, իսկ մարդիկ՝ փոքրիկ կէտերի, որոնք շարժւում էին սոխոակ քարեայ զբօսավայրում:

Առաւօտները արեւելեան մեղմ քամին բերում էր իր հեա մարդկանց խօսակցութեան անկանոն ձայները, որոնք խլանում էին շողենաւերի սաստիկ շվիցից: Կէսօրին հասնում էր հանգստութեան ժամը: Նաւահանգիստում ափում էր խաղաղութիւն, որոնները թափնում էին ժայռերի ճեղքուածքներում, ալիքները մեղ-

մանում և մի տեսակ թմրում էին. այդ ժամանակ երկրի, ծովի և փարոսի վերայ տարածւում էր խաղաղութեան բոպէն: Դեղնագոյն աւազները, որոնցից խոյս էին տալիս ալիքները, ջրի մակերևոյթի վերայ փայլում էին ոսկեայ բծերի նման. շատ պարզ կերպով կապուտակ օդի մէջ տեսանելի էր աշտարակը, երկնքից արեւի առատ ճառագայթները թափւում էին ջրի, աւազների և ժայռերի վերայ, այդ ժամանակ ծերունուն էլ ափրապետում էր մի տեսակ լի քնքշութեամբ քաղցրութիւն, թմրութիւն: Զգում էր նա իր վայելած հանգստութեան քաղցրութիւնը. իսկ մտածելով որ այդ հանգըստութիւնը յարատե կըլինի, նա արդէն իրան ամենաերջանիկ մարդն էր համարում:

Սկավինսկին սկսեց մտածել իր բաղդի մասին և որովհետեւ մարդիկ աւելի շուտ են ընտելանում լու վիճակի, հետեաքար ամրապնդւում էին նրա հաւատն ու յոյսը. նա մտածում էր, որ եթէ մարդիկ ծերացած զինուորների համար տներ են կառուցանում, հոսպսինջը Աստուած չէ խնամում և՛ ինձ ծերու-

կիս: Այն ինչ ժամանակը սահում էր և նա առաւել ևս հաստատուում էր այդ համոզմունքի մէջ: Արդէն նա սովորել էր իր աշտարակին, լապտերին, ժայռերին, աւազուտ ծանծաղուտներին, իր մենակեցութեանը. նոյնպէս նա ծանօթ էր որորների հետ, որոնք տեղ էին բռնել ժայռուտ ծերպերում և երեկոյեան պահուն հաւաքուելով լապտերի գլխին, խորհուրդ էին կազմում: Սովորաբար Սկավինսկին տալիս էր նրանց իր կերակրի մնացորդները և կարճ ժամանակամիջոցում նրանք այնքան մերուեցան նրա հետ, որ կերակուրը բաժանելիս՝ այս ու այն կողմից հաւաքուում էր սպիտակ թեւաւորների մի խումբ և ծերունին նրանց մէջ ման էր գալիս, ինչպէս հովիւը ոչխարների մէջ:

Ծովի տեղատուութեան ժամերում նա գնում էր աւազուտ ծանծաղուտի մօտ, որտեղ ժողովում էր համեղ ծովային կենդանիներ և գեղեցիկ սաղափի խեցիներ, որոնց ալիքները թողել էին աւաղի վերայ:

Գիշերը լուսնի և լապտերի լուսով նա գրնում էր ձուկ որսալու, որով առատ էին կղզու

ծոցիկները. վերջապէս նա սիրելով սիրեց և իր ժայռը և անտառից զուրկ կղզեակը, որի վերայ բուսնում էին մածուծիկ խէժ թորող փոքր և հիւթալից բոյսեր միայն, թէև հեռաւոր տեսարանները իրանց գեղեցկութեամբ անզգալի էին դարձնում կղզեակի անձոխութիւնը: Կէսօրին, երբ մթնոլորտը թափանցիկ էր դառնում, տեսանելի էր լինում շքեղ բուսականութեամբ ծածկուած ամբողջ նեղուցը մինչ խաղաղ Ովկիանոսը. Սկավինսկուն թուեց, թէ նա տեսնում է մի ահագին այգի:

Կօկոսների (հնդիկ ընկոյզ) և հսկայական միմօզների*) խմբերը Ասպինվիլի ծայրի աների քամակում ցիր-ցան շարուած էին փնջերի նման: Աւելի հեռու Ասպինվիլի և Պանամայի մէջտեղ աչքի էր ընկնում ահագին անտառ, որի վերայ իւրաքանչիւր առաւօտ և երեկոյ կանգնած էր լինում կամրադոյն գոլորշին—խակ և խակ արեւադարձային անտառ. նրա ներքեւում

*) Մի տեսակ բոյս է, որը, եթէ ձեռք տաս, թագնում է, կարծես, իր տերեւները և ծաղիկները:

կանգնած է անշարժ ջուրը. անտառ, որը զբո-
կուած է գուտապերչայի, կաթնաբուլի ծառե-
րի և արմաւենիների օրօրուող-շշնջող կատար-
ներով: Աշտարակի հեռադիտակով ծերունին
կարողանում էր ջոկել ոչ միայն բանանների*)
ցրուած տերեւները, բայց և կապիկների խմբերը
ու թութակների երամները, որոնք ժամանակ
առ ժամանակ ծիածանաձև ամպի նման սա-
ւառնում էին անտառի վերայ: Սկզբինսկին քաջ
ծանօթ էր այդ տեսակ անտառների, որովհե-
տեւ, երբ նրա նաւը Ամաղօնկի վերայ խորտա-
կուեց, ամբողջ շաբաթներ նա թափառում էր
կանաչ կամարների և թաւուտների մէջ: Գի-
տէր նա, թէ որքան վտանգների և մահուան
հոտ է փչում նրանց հրաշալի, ծիծաղազեղ
արտաքին տեսքի տակից: Նրանց մէջ անց կա-
ցրած զիշերները շատ անգամ լսում էր ոչ
հեռուից կապիկների զուռոյը և ամբերիկական
վազրների զերեզմանական մռնչիւնը. տեսել էր

*) Արմաւենիի մի առանձին տեսակ, որը պատկանում
է „musaceae“ ատուած դասակարգին:

նա վիթխարի օձեր, որոնք զալարւում էին կրծ-
կուող բոյսերի նման: Գիտէր նա, ծովային ձկնե-
րով լի քնած լճակները, ուր կօրկօղիլոսներն
էին վիտտում: Տեսել էր նա, թէ ի՞նչ լծի տակ
է ապրում մարդը այդ անսահման ծառաստա-
նում, որտեղ ծառերի տերեւները տասն անգամ
անցնում են նրան իրանց մեծութեամբ. ուր
խումբ-խումբ ման են զալիս արիւնաբու ամե-
րիկական մթղուկները, բոյն են դնում ծառի
տղբուկները, սարդերը: Այս բոլորը նա գիտէր,
փորձել էր, ամենը համբերութեամբ տարել և
ահա թէ ինչո՞ւ նա մեծ բաւականութիւն էր
զգում իր բարձրութիւնից նայել այդ ամե-
նի վերայ, սքանչանալ նրանց զեղեցկութեամբ,
բայց միևնոյն ժամանակ ազատ մնալ նրանց
որոգայթներից. այդ տեսակ չարիքներից նրան
պահպանում էր աշտարակը, որից բաժանւում
էր միմիայն կիւրակէ առաւօտները: Հագնում էր
նա այդ միջոցին նռան գոյնի, երկարափեշ պա-
հապանի համազգեստը արծաթեայ կոճակներով,
կախում կրծքից իր խաչերը և հպարտութեամբ
բարձրացնում էր իր սպիտակահեր գլուխը, երբ

կրէօյները եկեղեցուց դուրս դալով, միմեանց տառամ էին. «Մենք այժմ կարգին պահապան ունենք. թէպէտ ամերիկացի է, բայց հրեափոս չէ» :

Ժամասացութիւնից յետոյ նա իսկոյն վերադառնում էր իր կղզեակը միանգամայն զոհ սրտով, որովհետեւ դեռ ևս ցամաքին հաւատ չէր ընծայում: Կիւրակէ օրերը նա կարդում էր քաղաքում գնուած Սպանական լրագրի կամ «Ճէրալդ», որ վերցնում էր ֆօլիէմբրիձից, ուշի ուշով պտրում էր նրանց մէջ Եւրոպայից նորութիւններ:

Ողորմելի ծերուկի սիրտ... պահապանի աշտարակի վերայ, այն էլ երկրի միւս կիսագնաւում, դեռ դու բարախում ես հայրենիքիդ համար: Երբեմն էլ երբ ամեն օր կերակուր ու ջուր բերող մակոյիկը մօտենում էր կղզուն, Սկավինսկին ցած էր իջնում աշտարակից փոքր ինչ խօսակցելու պահապան Զօնսի հետ. այնուամենայնիւ ժամանակի ընթացքում նա զգալի կերպով վայրենանում էր: Դադարեց նա քաղաք գնալուց, դադարեց լրագիր կարդալուց.

այլ ևս չէր իջնում աշտարակից ցած Զօնսի հետ քաղաքական հարցերի մասին վիճելու. այդպէս շարաթներ էին անցնում և Սկավինսկին ոչ ոքի երես չէր տեսնում: Միակ նշանը, որ նա կենդանի է, այդ այն էր, որ ափի մօտ բերած պաշարեղէնները անյայտանում էին և լսպտերը ամեն երեկոյ վառւում էր այնպիսի ճշտութեամբ, որպիսի ճշտութեամբ այս կողմերում արեգակը ծագում է ծովի միջից: Երևում էր, որ ծերունին անտարբեր էր զէպի աշխարհը. դրա առիթը ոչ թէ հայրենիքի կարօտն էր, այլ այն, որ այդ կարօտն և՛ս լուռ, անտրտուն չհնազանդուել էր ճակատագրին:

Ամբողջ աշխարհը ծերունու համար սկսւում ու վերջանում էր իր կղզու վերայ. արդէն հաշտուել էր նա այն մտքի հետ, որ մինչև մահը չէ թողնելու աշտարակը և պարզն ասած՝ մոռացել էր, որ այդ աշտարակից դուրս ևս մի բան գոյութիւն ունի. սրա հետ միասին նա մի տեսակ խորհրդաւոր էր դարձել: Նրա հեզ, կապոյտ աչքերը, երեխայի աչքերի նման, միշտ ուղղած, յառած էին զէպի հեռուն: Շնորհիւ

իր մշտական առանձնութեանը և նրա համար, որ ամեն ինչ նրան շրջապատողը չափազանց անպաճառ և փառաւոր էր, ծերունին սկսել էր արդէն կորցնել իր անհատական գիտակցութիւնը, դադարել էր գոյութիւն ունենալ ինչպէս անհատ, աւելի և աւելի համակերպուել էր շրջապատող առարկաների հետ: Դրա մասին նա չէր մոռա՞նում, անդիտակցաբար միայն զգում էր, վերջ 'ի վերջոյ թւում էր նրան, որ երկինքը, ծովը, ժայռերը, աշտարակը, աւաղուտ ծանծղուտները, փքուած առագաստները, որոնները, ծովի մակընթացութիւնը և տեղատուութիւնը — այս բոլորը միասին մի երեւելի ամբողջութիւն, մի ահագին խորհրդաւոր ոգի է, իսկ ինքը, այդ զաղանիքի մէջ խորասուզուած՝ զգում է այդ ոգին, որը ապրում ու ստեղծում է. . .

Մտախոհութեանց մէջ ընկած՝ Սկավինսկին մրափեց, մոռացաւ ինքն իրան: Այդ իր անհատական գոյութեան մոռացութեան, այդ կէսկասութի, կէս-քնի մէջ նա դաւաւ այնպիսի հանդիմանութիւն, որը նմանում էր կէս-մահուան:

III.

Շուտով սովայն նա ուշքի եկաւ:

Մի օր, երբ մակոյիլը բերեց ջուր և պաշտեղէն, Սկավինսկին իջնելով մի ժամից յետոյ աշտարակից ցած՝ նկատեց, որ բացի սովորական բեռից մակոյիլը բերել է նրա համար և մի աւելորդ ծրար: Ծրարի վերայ կային Միացեալ Նահանգների նամականիշներ և հաստ քաթանի վերայ զրուած պարզ հասցէ՝ «Սկավինսկի էսք» (Skavinsky esq): Ծերունին հետաքրքրուած կարեց քաթանը և տեսաւ զրքեր. մէկը վերջրեց նա, նայեց ու կրկին տեղը զրեց. նրա ձեռները այդ միջոցին աստափկ զոգոցողում էին: Նա խփեց աչքերը, կարծես թէ չէր հաւատում նրանց. այդ երազ էր թւում Սկավինսկուն. զիւրքը լեհերէն էր: Ի՞նչ կընշանակէ այդ. ո՞վ կարող էր ուղարկել: Առաջին բուպէներում նա անշուշտ մոռացաւ, որ դեռ իր ծառայութեան սկզբին, կարգադրով «Հէրալդի» մէջ, որ նիւ-

Եօրկում մի լեհական ընկերութիւն է հաստատուում, նա իսկոյն և եթ ուղարկեց այնտեղ իր ամանական ուժի կէսը, որը նրան իսկապէս հարկաւոր էլ չէր աշտարակի վերայ: Դրա փոխարէն ընկերութիւնը դրբեր ուղարկեց. ուրեմն դրբերի ստանալը այնքան էլ վարմանալի չէր, բայց ծերունին սկզբից դիտի չ'ընկաւ: Լեհական դրբեր և՛ այն էլ Սապինվիլում, աշտարակի վերայ, նրա մենակեցութեան մէջ—այս բոլորը մի արտասովոր երեւոյթ էր, որից փչում էր մոռացուած անցեալի յիշատակը, մի հրաշք էր ..

Ինչպէս գիշերը նաւապետներին, նոյնպէս և հիմա Սկավինսկուն թուեց, իբրև թէ մի ինչ որ տալիս է նրա անունը սիրալիր, բայց գրեթէ մոռացուած ձայնով:

Բուպէալափ նա նստած էր փակած աչքերով և զրեթէ համոզուած, որ երբ բանայ, տեսիլը կ'անհետանայ: Ո՛չ, նրա առաջ ափ-աչկարա զրուած էր բացած ծրարը, որի վերայ ընկել էին կէսօրեան արևի շողքերը. իսկ այդ ծրարի վերայ բաց արած գիրքը: Երբ ծերունին կրկին պարզեց իր ձեռքը գէպի գիրքը, նա լսում էր

իր սրտի բարխոււմը. նայեց և տեսաւ ոտանաւորներ: Խոշոր տառերով սկզբում գրուած էր դրբի վերնագիրը. իսկ աւելի ցած—հեղինակի անունը: Այդ անունը նրան ծանօթ էր. գիտէր, որ դա պատկանում է լեհաց հռչակաւոր բանաստեղծին, որի գրութիւնները կարդում էր Փարիզում 30 թուականից յետոյ: Այնուհետև Այժիրում և Սպանիայում կռուելիս լսել էր իր հայրենակիցներէից, որ մեծահռչակ բանաստեղծի փառքը օրըստօրէ աւելանում է. բայց Սկավինսկին այնքան սիրահար էր հրացանի, որ գիրք չէր վերցնում ձեռքը: Քառասուն ինն թուականին նա Ամերիկա գնաց և իր թափառաշրջիկ կեանքի մէջ լեհացիների գրեթէ չ'աւտահեց, իսկ լեհական դրբեր—երբէ՛ք: Ահա թէ ինչո՞ւ նա աւելի արագութեամբ և սրտի բարխոււմով թերթեց առաջին երեսը: Թուում էր այժմ, թէ նրա միայնակ ժայռի վրայ մի ինչ որ փառաւոր հանդէս է տպաւորւում. դա իսկապէս խորին հանգստութեան և խաղաղութեան բուպէն էր. . .

Սապինվիլի ժամացոյցը խփեց հինգը, ո՛չ մի

ամայ չէր խառարեցնում պայծառ երկինքը. քանի մի որորներ կապուտակ երկնքում սառածնում էին և անհնաճում հորիզոնում, ննջում էր ովկիանոսը. ափի ալիքները խաղաղ ծփում էին, հանդարտ—լուռ խփուելով ոսկեգոյն աւազներին: Ասպինվիլի սպիտակ աները և հրաշայի արմաւենիների խմբերը խայտում էին, կարծես հեռաստանում. այո՛, բնութեան մէջ ծաւալուած էր մի տեսակ խաղաղութիւն և փառահեղութիւն: Այս լուութեան մէջ յանկարծ լուսեց ծերունու զողբօջուն ձայնը, որը լուր ըմբռնելու համար բարձր էր կարգում:

«Կաթողին հայրենիք, կենսատու հայրենիք, նա՛ է միայն տողորում քո ճշմարիտ սիրով, ով որ քեզ կորցրել է. տանջանքների և կուռի մէջ, սիրուն հայրենիք, ես քեզ համար արցունք եմ թափում»... .

Սկավինսկու ձայնը կտրուեց. տառերը նրա աչքի առաջից փախչում էին, սրտի միջից կարծես մի բան կտրուելով, գնում էր, գնում կոհակի նման, սրտից զէպի վեր և վեր, խնդրելով նրա ձայնը, սեղմելով կոկորդը, մի ակնթարթ

ևս—նա զսպեց իրան և սխեց շարունակել.

«Մայր Աստուածածի՛ն, Դու, որ հսկում ես Վիկնային»... .

Մօտեցող ալիքը պատտուեց ամբարտակը: Ծերունին հեկեկաց և գետին ընկաւ. նրա ալիխառն մտղերը փռուեցին ծովափի աւազի վերայ: Գլորում է ահա քառասուն տարին, որ նա չէ տեսել հայրենիքը և Աստուած գիտէ, որքան ժամանակ է, որ նա չէ լսել իր մայրենի լեզուն, մինչդեռ այդ լեզուն ինքն իրան եկու. նրա մօտ, այստեղ. անցաւ ովկիանոսը և միւս կիսագնաւի վերայ զսառ այդ ճգնաւորին, որչափ սիրելի, որչափ թանկազին, որչափ հրաշալի է այդ լեզուն: Զ'կար ցաւ նրան ցնցող հեկեկանքների մէջ. նրանց մէջ կար միայն յանկարծակի արթնացած անհուն սէր, որի առաջ ամեն ինչ խամրում է: Այդ աղէտալի բացով նա ներումն էր միայն խնդրում հեռաւոր Սիրուհուց, ներումն այն բանի համար, որ այնքան ծերացել է, այն աստիճան ընտելացել իր միայնակ ժայռին և անձնատուր եղել այնպիսի մոռացութեան, որ հայրենիքի կարօտն իսկ նրա մէջ

սկսել էր մարել... Իսկ այժմ հրաշքով նա իր սիրելի հայրենիքի դիրքը վերադարձաւ. այդ պատճառով էլ նրա սիրտը այգբան լցուեց: Մինը միւսի յետեւից անցնում էին բուսկները. դեռ ևս նա պառկած էր:

Որորները մօտեցան ազմուկով լապտերին. կարծես թէ նրանք անհանգիստ էին իրանց վաղեմի բարեկամի համար: Մօտենում էր ժամը, երբ նա կերակրում էր նրանց ճաշի փշրանքներով. այդ պատճառով մի քանիսը մինչև անդամ ջած իջան նրա մօտ. հեռզհեռ աւելանում էր նրանց թիւը. նրանք սկսեցին թեթեւ կերպով կսմթել նրանց իրանց կառուցներով և նրա զլխի վերայ թափահարել իրանց թեւերը, որոնց ձայնը արթնացրեց Սկավինսկուն: Երբ նա վեր կացաւ, երեսին այլ ևս արտասուք չուրար. նա ընդհակառակը՝ փայլում էր, նրա վերայ տիտուած էր հանգստութիւն, իսկ աչքերը լի էին կարծես թէ ոգևորութեամբ. ամբողջ կերակուրը անդիտակցաբար տուեց թռչուններին, որոնք ծալով թափեցին նրա վերայ, իսկ ինքը դիրքը առաւ ձեռքը: Այգիները և Պա-

նամայի կուսական անտառների վերայով անցել էր արդէն արեգակը և դանդաղ կերպով գլորւում էր պարանոցից այն կողմը, դէպի միւս ուղիւն ուղարկելով. մինչդեռ Ստրանտեան ուղիւն ուղարկելով ջրերը շողշողում էին, դեռ ևս լոյս էր բոլորովին, ծերունին շարունակում էր կարդալ.

«Այժմ ամբ իմ վշտալի ու ախուր հոգին դէպի կաթողին հայրենիքս, հեռաւոր երկինքը, դէպի նրա մօտը տափաստաններն ու մարգարեականները...» *):

Կարճատեւ ազմուկը մի ակնթարթի մէջ խլեց նրա աչքերից տառերը և այն ժամանակ «Նա, որ հսկում է Վիլնային», զրկեց նրա հոգին և փոխադրեց այդտեղով զարդարուած ոսկէփայլ դաշաւը»:

Երկնքի վերայ դեռ ևս վառվում էին երկար, ոսկէգօծ ու կարմիր շերտերը. իսկ ծերունին շրջապատուած այդ լոյսով թռչում էր դէպի

*) Մի քանի տող Միգիեվիչի ոտանաւորներից, որ բերում է այստեղ, աղաւաղելով Թարգմանել է Բերդը. չկամենալով աւելի ևս աղծատել, մենք պատեղ միայն Թարգմանեցինք արծակ:

սիրելի տեղերը. սոճիների անտառները շնչում էին նրա ախանջին, հայրենի գետերը կարկաջում: Նա տեսնում է ամեն բան այնպես, ինչպես առաջ. ամեն մի առարկայ հարցնում է նրան. յիշում ես արդեօք: Օ՛, նա յիշում է, անգամ նա տեսնում է լայնատարած դաշտերը, միջակները, մարգագետինները, անտառները, գլղերը. . .

Արդեն գիշեր է... սովորաբար այդ միջոցին նրա լսականքը ծովային խառնուրդ էր հալածում, իսկ այժմ՝ ծերունին գտնում է իր հայրենի գիւղում: Ալեխառն գլուխը կրծքին կորացած՝ լի է երազներով. արագ ու անկանոն կերպով երևան են գալիս նրա առաջ զանազան պատկերներ: Չէ տեսնում նա պապական առևեր, որովհետև քար-քանդ է եղել պատերազմի ժամանակ. չէ տեսնում հորը, մորը, որովհետև դեռ իր երեխայութեան ժամանակ նրանք մեռել էին. մնացածը նոյնն է, կարծես, երևի է նա հեռացել այդ գիւղից... խրճիթների մի շարք, պատուհաններում փայլում էր աղօտ լյպսը, ամբարտակը, ջրաղացը, երկու լիճ, որոնց միջև

ամբողջ գիշերը լսում էր զորաների կռիւղը. . . .

Մի ժամանակ իրանց գիւղում նա հերթակալ պահապան էր. այդ բոլորը նրան այժմ երազների մի շարք է թւում, այժմ դարձեալ նա ուլան (уланъ) է և հերթակալ պահապան. հեռում գինեատուներ նայում է բոցավառ աչքերով, այնտեղից գիշերային անդորրութեան մէջ լսում է երգերի աղմկալի ձայնը, արոփիւն, դռիւն-դռչիւն, ջութակի և քառադի նուագարանի հնչիւնները... Ուհա՛, ուհա՛... Ուլանները պարում են. նրանց կօշիկների պայտերից կարծես կայծեր են թափում. իսկ Սկավինսկին այնտեղ միայնակ ձիու վերայ սրանեղում-ձանձրանում է. դանդաղութեամբ անցնում են ժամերը. ահա՛ վերջապէս կրակները մարում են. հիմա նայիր, ուր ուղում ես՝ խառար, անթափացիլ խառար. աչքերիդ թւում է, թէ զորքիները բարձրանում են մարգագետիններից և ամբողջ երկիրը ծածկում սպիտակաւուն մէգով: Կատարեալ ովկիանոս, կարելի է ասել. բայց մարգագետիններն են այդ. ահա փոքր ինչ յետոյ

մթութեան մէջ ձայն կ'արձակէ լորամարզին և շամբուսներում կրճան արագիւնները:

Խաղաղ ու ցուրտ գիշեր է, իսկ և իսկ Լեհաստանի գիշեր. հեռում սոճիների անտառը խշռում է առանց քամու, ինչպէս ծովի ալիքը. շուտով արշալոյսը կը լուսաւորէ արեւիքը. աքաղաղներն արդէն իրանց «ծուղողոզն» են կանչում ցանկերի միջից. մինը միւսին խրճիթ-խրճիթ ձայն է տալիս. բարձրում ահա կըռռում են կռունկները. . .

Ուլանը իրան զգում է ժիր ու առողջ. ինչ որ խօսում էին վաղուան կռուի մասին. այո՛, ուրիշների նման կընայ և նա, աղմուկով ու ծածանող զրօշակներով: Երիտասարդական արիւնը կռում-խաղում է, չ'նայած որ գիշերուայ հովը սառցնում է նրան. բայց ահա լոյսը բացւում է, մօտ է արշալոյսը... գիշերային խաւարը անօսրանում է. ստուերների միջից երեւում են անտառներ, թփեր, խրճիթներ, ջրաղաց, կաղամխիներ... Ճռճռում է ջրհորը, ինչպէս աշտարակի թիթեղեայ հողմացոյցը. . .

Ո՛րչափ սքանչելի է այդ սիրուն երկիրը ար-

շալոյսի վարդադոյն ցոլացումների մէջ, ո՛հ, կաթոգին, սիրելի հայրենիք. . .

Արթուն պահապանը լսում է, որ մէկը մօտենում է. երևի հերթապահն է գալիս:

Մի ձայն յանկարծ կանչում է Սկավինսկուն: Ե՛յ, ծէրունի, վերկացէք. ի՞նչ է պատահել ձեզ:

Ծերունին բաց է անում աչքերը և զարմանքով նայում իր առաջ կանգնած մարդուն, թերի մնացած երազները գեռ ևս կռւում են նրա մէջ իրականութեան հետ, վերջապէս նրբանք նսեմանում, անհետանում են: Նրա առաջ կանգնած էր նաւահանգստի պահապան Զօնար:

— Ի՞նչ է, դուք հիւանդ էք, — հարցնում է նա:

— Ո՛չ:

— Դուք չէք վառել լոպտերը. պէտք է հրաժարուէք ձեր պաշտօնից: Ս. Փրանցիսկօից դալող նաւը փշրուել է ծանծղուտում. ձեր բաղդիցն է, որ ո՛չ ոք չէ խեղդուել. հակառակ դէպքում դուք դատի կ'ենթարկուէիք. դնանք, մնացածը հիւպատոսարանում կ'իմանաք. . .

Ծերունին դունատուեց. յիրաւի, նա այդ գիշերը լապտերը չէր վառել:

Մի քանի օրից յետոյ Սկավինսկուն տեսան Աւսկինսկից Նիւ-Եօրկ գնացող նաւի տախտակամածի վերայ. խղճուէր զոկուել էր պաշտօնից. Թափառական կեանքի նոր ճանապարհներ այժմ բացուում էին նրա առաջ: Կրկին քամին խլեց այդ տերեւը՝ ծովեր-ցամաքներ շարաւելու աւելել ևս ծաղրելու նրան: Այդ մի քանի օրուայ ընթացքում ծերունին կուչ եկել, կուացել էր. աչքերն էին միայն, որ փայլում էին: Կեանքի նոր ուղիների համար նա ունէր կրճքի վերայ դիւբը, որը ժամանակ առ ժամանակ պինդ սեղմում էր, վախենալով, մի՛ դուցէ այն ևս կորչի. . .



4873

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

